




**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ
ԳԵՐ. Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝
ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ
ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ
ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ,
ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ,
ՈՂԶՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Գոհութիւն Աստուծոյ Ամենակալին որ տաանեալս տարիներէ ի վեր,
նուիրումով և հոգեւոր բարձր հեղինակութեամբ, համաձայն երջանկալիշա-
տակ Տ. Տ. Գէորգ Զ կաթողիկոսի 25 հոկտեմբեր 1952 թուակիր կոնդակի,
իբրեւ հայրապետական պատուիրակ եւ առաջնորդ հայոց Փարիզի կը ղեկա-
վարէր Արեւմտեան Եւրոպայի թեմը իր եկեղեցիներով և համայնքներով,
հանդիսանալով նաեւ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի արժանաւոր ներկայացու-
ցիչը Եւրոպայոյ այդ շրջանի երկիրներու մէջ:

Վերջին տարիներու ընթացքին, հայ հաւատացեալներու թիւը զգալի-
օրէն բազմանալով Արեւմտեան Գերմանիոյ մէջ, անհրաժեշտութիւնը ստեղծ-
ուած է կրօնական համայնքներու կազմութեան և կազմակերպման, մանա-
ւանդ Միւնխեն, Քէօլն եւ Համբուրգ քաղաքներուն մէջ: Մեզ յայտնի է թէ,
այս եւ այլ քաղաքներ բնակչութիւն հաստատած մեր հոգեւոր զաւակները ար-

դէն իսկ սկսած են մէկտեղուիլ եւ նախնական աշխատանքներ կատարել որպէսզի գոյութիւն առնեն, կազմակերպուին եւ օրինաւորապէս ճանաչուին իբրեւ կրօնական համայնքներ:

Արդ, Մենք ժամանակը եկած կը նկատենք որ Զերդ Սրբազնութիւնը անձամբ այցելէ Արեւմտեան Գերմանիոյ հայաշատ կեդրոնները տանելու համար հայ հաւատացեալներուն Աստուծոյ օրհնութիւնը Մայր Աթոռ սուրբ Էջմիածնէն եւ Մեր հայրական սիրոյ ողջոյնը, ամենաբարի մատթանքներով հանդերձ: Կ'առաջարկենք նաեւ որ, համախորհուրդ՝ տեղի հայութեան բարեպաշտ ու յարգարժան ներկայացուցիչներու հետ, ձեռնարկէք հայ համայնքներու կազմակերպման իբրեւ կրօնական համայնքներ, համաձայն հայ եկեղեցոյ կարգն ու կանոնին եւ տեղական պետական օրէնքներու տրամադրութիւններուն ապահովելով հայ հաւատացեալներու կրօնական կարիքներու մատակարարումը եւ հոգեւոր մխիթարութիւնը առայժմ պարբերական եւ կանոնաւոր այցելութիւններով Փարիզի Զեր կեդրոնէն, եւ մօտ ապագային մնայուն հոգեւոր հովիւներու պաշտօնավարութեամբ, Զերդ Սրբազնութեան իշխանութեան ներքեւ:

Սուրբ հաւատքով գոտեպինդ ու լաւատէս տարէք Արեւմտեան Գերմանիոյ Մեր հոգեւոր զաւակներուն Մեր հայրական սէրն ու օրհնութիւնը եւ Մեր հայրապետական պատգամը որ բոլորը անխտիր անշարժ մնան մեր քրիստոնէական լոյս հաւատքի վեմին վրայ, միշտ հարազատ մեր առաքելական մայր եկեղեցիին, միշտ հաւատարիմ ամենայն հայոց սրբութիւն սրբոց Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին:

Սիրելի Սրբազան, Տիրոջ ողորմութեամբ ու օգնականութեամբ Զեզի ի սրտէ կը մատթենք լիակատար յաջողութիւն Զեր նուիրական պաշտօնական ճանպարհներ վրա:

«Եւ արդ, զհանդէս սիրոյ ձերոյ՝ եւ զմերոյ պարծանացն վասն ձեր, ի դուս ցուցչիք յանդիման ամենայն եկեղեցեաց» (Բ Կորնթ. Ը 14):

Վաչագան

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տրուա կոնդակս ի 10-ը մարտի
1971 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԺԹ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 701

